ւորքն հասին յԵրուսաղէմ արիւնաթաթաւ. առին զնոսա Փոխանորդ և Թարգմանն գնացին 'ի դատարան, ընդ որս էին և բազումք յուխտաւորաց. և եղեւ անդ աղմուկ և ձայն խռովութեան. իբրև ետես Դատաւորն՝ թէ ոչ կարէ հանդարտել զնոսա, փութանակի կոչեաց զԲաղաքապետն և զայլս յայլազգեաց. ձայն աղաղակին Հայոց բարձրանայր, դատ արարէք ընդ մեզ և ընդ Լատինս. եկին 'ի նմին ժամու և Լատինք և Ջանային պարտաւոր կացուցանել զՀայս, որպէս թէ Հայք դիտմամբ յաւելեալ են զթիւս միաբանաց Բեթղեհէմի և պատրաստեալ 'ի կռիւ ընդ Լատինս. Աւետիս Թարգման կալեալ զձեռանէ Յարութիւն վարդապետի ճրագաւ ցուցանէր նոցա զարիւնաթաթաւ զերեսս նորա և զայլոց. զայն տեսեալ Լատինաց կարկեցան, մանաւանդ Տիրա Մանուէլ Թոթափէր ձեռս իւր, եւ այլք ուրանային՝ զարարս իւրեանց. իսկ Աւետիք և այլք գոչէին առնել իրաւունս՝ զի եթէ ոչ էր տուեալ ձեր զզօրութիւնդ, Լատինք ոչ կարէին առնել ինչ. և ապա յարմակեցան 'ի վերայ Բաղաքապետին, որ լռութեամբ նստէր անդ, և կշտամբէին զնա հարկանելով յերեսս նորա զդաւաճանութիւնն եւ զխարդախութիւն նորին, և նա չառնէր ինչ պատասխանի. խառնաձայն իմն հնչէր աղաղակն 'ի դատարանի և ոչ լինէր լսելի բարբառ իւրաքանչիւրոց. ոմանք յորդորէին լռել. Դատաւորն կանգնեալ յոտին գոչէր՝ լռեցէք նստարուք՝ 'ի վաղիւ տեսանի դատաստան ձեր. այլ Հայք ասէին, եթէ 'ի սոյն ժամու ոչ տեսանի, վաղիւ յայլ իմն եղանակ դառնայ դատն։ Տեսեալ Լատինաց թէ ոչ գոյ ազատութիւն՝ իբր փախստեայ խոյս ետուն 'ի դատարանէ, և Դատաւորն հրամայեաց քննել զվիրաւորս Հայոց։ Յարութիւն վարդապետ վիրաւորեալ 'ի յոնս և 'ի քիթս հարուածովք դաւազանի և արիւն հոսէր 'ի բերանոյն. Ռափայել վարդապետ վիրաւորեալ 'ի գանկէ յետ կոյս ականջաց. Խաչատուր վարդապետ 'ի ձախոյ ձեռին։ Խոստացաւ Դատաւորն 'ի վաղիւ ժողովով քննել զանդիրն և արձակեաց զնոսա։ Արար ժողով ըստ խոստման իւրոյ, գնացին Հայք և սպասեցին ցմեծ ժամս դալստեան Լատինաց, երկիցս հրաւիրեաց զնոսա Դատաւորն եւ ոչ եկին. զի ասէին թէ բաւական է երեկեան խայտառակութիւնն,